ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 1129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» N 1129-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

N1 ցուցակում՝ «U-47700 (3,4-դիքլոր-N-[(1R,2R)-2-(դիմեթիլամինո) ցիկլոհեքսիլ]-N-մեթիլբենզամիդ)» բառերից հետո լրացնել՝

«MDMB(N)-073-F (մեթիլ 3,3-դիմեթիլ-2-(1-(4-ֆտորոբութիլ)-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդո) բութանոատ)

MDMB(N)-073

մեթիլ 2-[(1-բութիլինդազոլ-3-կարբոնիլ)ամինո]-3,3-դիմեթիլբութանոատ

MMB-022

մեթիլ-3-մեթիլ-2-(1-(պենտ-4-են-1-իլ)-1H-ինդոլ-3-կարբոքսամիդո)բութանոատ

AEB-FUBINACA (EMB-FUBINACA)

էթիլ (1-(4-ֆտորոբենզիլ)-1H-ինդազոլ-3-կարբոնիլ)-L-վալինատ

N-մեթիլէֆեդրոն (Metamfeptamone, dimethylcathinone, dimethylpropion,) կամ (2-(դիմեթիլամինո)-1-ֆենիլ-1-պրոպանոն)» բառերով:

2. N 2 Ցուցակում «Դիֆենօքսիլատ» բառից հետո լրացնել «Դրոնաբինոլ» բառը:

3. N 3 Ցուցակից հանել «Դրոնաբինոլ» բառը: